

Փ Ա Ռ Ք Մ Ե Օ Ա Օ



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԱԿԱՆԱՎՈՐ ՆԿԱՐԻՉ ԳԱՌՁՈՒԻՆ
(ԳԱՌՆԻԿ ԶՈՒԼՈՒՄՅԱՆ)
«Ս. ՍԱՀԱԿ—Ս. ՄԵՍՐՈՊ» ԾՔԱՆԾԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՏԱՂԱՆԴ ՆԿԱՐԻՉ ԳԱՌՆԻԿ ԶՈՒԼՈՒՄՅԱՆ-ԳԱՌՁՈՒԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ
ՈՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՓԱՐԻՉ

Աստուած՝ պարգևատում բարեաց, Իր լոյս շնորհները միշտ առատօրէն բաշխած է մեր հիմաւորց ազգի զաւակներէն շատերուն, պատմութեան ընթացքին: Այդպէս է որ մեր ժողովուրդը նոյնիսկ իր գոյութեան փոթորկալոյժ ժամանակներուն, իր ծոցէն ծնունդ տուած է հանճարադրոշմ անհատականութիւններու, որոնք իրենց ստեղծարար իրագործումներով հարստացուած են համամարդկային արժէքներու մեծ գանձարանը:

Դուք, վարպետ, մեր ժողովուրդի ստեղծագործած արժէքներու երկնակամարի վրայ բարձրացուցիք փայլուն աստղ մը ևս թոյլչք առած ասպնջական Ֆրանսայէն:

Զեր սնգուգական նկարչական արունեստը արգասիքն է հայկական ու ֆրանսական մտածումի և զգայութեանց ստեղծարար ուժերու միաստեղ ծաղկումին, նոր, ինքնատիպ գոյներու, լոյսերու և շարժումներու ներդաշնաւորումներով: Եւ բազում տարիներէ ի վեր Զեր գործերը յաճախ կը զարդարեն

ցուցահանդեսներու սրահները, գեղարուեստական հիացումի յուզում բաշխելով Ֆրանսայի և շատ այլ երկիրներու մեծ ուսումններու արուեստի երկրպագուներուն:

Ձեր արուեստը, Ձեր բազմերանգ տաղանդը, Ձեր պայծառ անձնատրոթինը մեծապէս գնահատուած են մաս հայոց հայրենիքի, Մայր Հայաստանի մէջ, ուր բոլորը հպարտ են ու խանդավառ Ձեզմով, Ձեր վաստակով, Ձեր համբաւով:

Մենք՝ Հայրապետ Հայոց, քաղցրօրէն գնահատելով համաշխարհային մանաշման հասած Ձեր արուեստը, այլև սիրով ընդառաջելով միջնորդութեանը Արևմտեան Երոպայի հայրապետական պատուիրակ և Փարիզի հայոց առաջնորդ գերաշնորհ տ. Սերովբէ արքեպիսկոպոսի, այսու Մեր կոնդակով Ձեզի կը շնորհենք «Սուրբ Սահակ—սուրբ Մեսրոպ» շքանշանը, մաղթելով որ զայն կրէք Ձեր ազնիւ կուրծքին վրայ երկար, շատ երկար տարիներ՝ մշտաւտն քաջաոռոյցութեամբ, անպատ ստեղծարար ներշնչումներով և ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

Կալ Չֆե Ռ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս յ-9 հոկտեմբերի
1979 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԸ
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 984

